ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀՐԱՉԵԱՅ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Սրտի խոր վշտով իմացանք վաստակաւոր հայ գրագէտի՝ Հրաչեայ Յովհաննէսեանի մահը:

Նա իր ողջ կեանքի ընթացքում հաւատարիմ մնաց իր բանաստեղծի աստուածատուր տաղանդին, որը նա արժանորեց իր ստեղծագործական բեղուն վաստակով: Մարդկային ազնիւ գաղափարների և արժէքների, հայ ժողովրդի կեանքին անքակտելիօրէն շաղախուած ապրումների հնչեղ երգիչը եղաւ Հրաչեայ Յովհաննէսեանը իր ապրած օրերին: Երբ կարդում ենք իր բանաստեղծութիւնները՝ ակնթարթ երևում է, որ հայրենասիրութեան իր գոյութենական խոր զգացումը ոսկի թելի նման անցնում է իր գրական էջերի միջից քնարական նուրբ երանգներով: Նրա անձը մահով վերջ չի գտնի: Նրա հոգին ֆիզիկական մահից յետոյ էլ նրա գրական գործերի նուագումով կը հնչի նաև գալիք սերունդների կեանքերում, որպէս քաղցրաձայն յուշարար հայ ժողովրդի ազատ և անկաշկանդ ոգուն, հայրենիքի նուիրականութեան և մարդկային ազնուացուցիչ ապրումների:

Այսու Հայրապետական Գրով յայտնում ենք իր ընտանիքի բոլոր անդամներին Մեր սրտազգաց ցաւակցութիւնները: Մեր վշտակցութիւնը նաև Հայաստանի Գրողների Միութեան և նրա բոլոր գրչակից եղբայրներին և քոյրերին:

Աղօթում ենք առ Ամենաբարին Աստուած, որ նրա հոգին ընդունի Իր երկնային երանաւէտ խաղաղութեան մէջ:

Թող Աստուծոյ շնորհը ծաղկի մեր հայ գրական անդաստանում նոր գրողների նոր ստեղծագործութիւններով, որոնցմով երկնքում պիտի հրճուին հոգիները մեր բոլոր ննջեցեալ գրողներին իրենց անդրշիրիմեան կեանքի ոլորտներում:

Բի՛ւր օրհնութիւն Ս. Էջմիածնի Մայր Աթոռից իր կեանքով մահը նուաճած բանաստեղծին՝ Հրաչեայ Յովհաննէսեանի անմեռ յիշատակին:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

26 Նոյեմբերի 1997
Ս. Էջմիածին